

Հավելված
Արցախի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2021 թվականի օգոստոսի 19 -ի N 5- Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Խաչմաչ համայնքի ղեկավարի, Ծաղկաշատ համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամների,
Մարտակերտի շրջանի Նոր Ղազանչի համայնքի ղեկավարի, Մարտունու շրջանի Հերիեր համայնքի ղեկավարի նոր հերթական ընտրությունների
նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների

Ընտրությունների օրը՝ 10 հոկտեմբերի 2021 թվական

N	Միջոցառման բովանդակությունը	Իրավական հիմքը (Արցախի Հանրապետության ընտրական օրենսգիրք)	Կատարման ժամկետը (ներառյալ)՝ 2021թ.	Կատարող(ներ)ը
1	Դիտորդներ հավատարմագրելու կամ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու համար դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. <i>ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ</i>	Հոդված 31, մաս 2	Օգոստոսի 13 -ից մինչև սեպտեմբերի 30-ը	Միջազգային կազմակերպություններ, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչներ, ԱՀ և օտարերկրյա հասարակական կազմակերպություններ
2	Դիտորդներին տրվող վկայականներն այդ կազմակերպություններին հանձնվում են. <i>դիմումն ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում</i>	Հոդված 31, մաս 3	Մինչև հոկտեմբերի 8-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
3	Ընտրական հանձնաժողովների անդամների, վստահված անձանց, դիտորդների և ընտրողների համար ուսումնական նյութեր մշակվում և հրապարակվում են. <i>ընտրությունների անցկացման ժամանակահատվածում</i>	Հոդված 51, մաս 2 , կետ 13	Օգոստոս-Սեպտեմբեր	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

4	Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների՝ վերջին մեկ տարում տվյալ համայնքում հաշվառված լինելու մասին տեղեկանքը տրամադրվում է դիմելուց հետո. <i>եռօրյա ժամկետում, քայքայ ոչ շուտ, քան մինչև ընտրությունների նշանակումը</i>	Հոդված 126, մաս 4	Օգոստոսի 13 -ից	Լիազոր մարմին
5	Ընտրական շտաբները կարող են կազմավորվել. <i>ընտրություն նշանակվելուց հետո</i>	Հոդված 19, մաս 4	Օգոստոսի 13 -ից	Թեկնածուներ
6	Համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին որոշում ընդունվում է. <i>Նախընտրական քարոզչությունն սկսելուց՝ 10 օր առաջ</i>	Հոդված 21, մաս 5	Մինչև սեպտեմբերի 6-ը	Համայնքի ղեկավար
7	Ընտրական տեղամասերը կազմավորվում են. <i>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ</i>	Հոդված 16, մաս 1	Մինչև Օգոստոսի 26-ը	Լիազոր մարմին՝ մասնակցությամբ համայնքի ղեկավարի և տարածքային ընտրական հանձնաժողովի անդամի
8	Տեղամասային կենտրոնները սահմանվում են. <i>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ</i>	Հոդված 18, մաս 1	Մինչև Օգոստոսի 28-ը	Համայնքի ղեկավար
9	Տեղամասային կենտրոնի սահմանման մասին լիազոր մարմինը, տարածքային ընտրական հանձնաժողովը և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողը տեղեկացվում են. <i>կենտրոնը սահմանելուց անմիջապես հետո՝ անհապաղ</i>	Հոդված 18, մաս 1	Օգոստոսի 28-ից ոչ ուշ	Համայնքի ղեկավար
10	Ընտրական տեղամասերի հերթական համարները սահմանվում և այդ տվյալները Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. <i>երկօրյա ժամկետում</i>	Հոդված 52, մաս 1, կետ 2	Մինչև Օգոստոսի 30-ը	Տարածքային ընտրական հանձնաժողով
11	Ընտրողների ցուցակների մեկ օրինակը (վերջին էջում ներառվող ընտրողների ցուցակներում անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, տեղի, դրանց քննարկման կարգի, ժամանակի և պայմանների մասին տեղեկանքով) տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին տրամադրվում և տեղամասային կենտրոնում փակցվում է. <i>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ</i>	Հոդված 12, մաս 1, Հոդված 13, մաս 3, Հոդված 8, մաս 8	Մինչև Օգոստոսի 31-ը	Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող
12	Ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք ըստ համայնքների կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում են. <i>ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 3 օր հետո</i>	Հոդված 12, մաս 2	Մինչև Օգոստոսի 17 -ը	Լիազոր մարմին
13	Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են. <i>քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 35 և ոչ ուշ, քան 30 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն</i>	Հոդված 138, մաս 3	Սեպտեմբերի 5-ից մինչև սեպտեմբերի 10-ի ժամը 18.00-ն	Թեկնածու կամ թեկնածուի լիազոր ներկայացուցիչ

14	Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների գրանցումը կատարվում է. քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30 և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն	Հոդված 138, մաս 4	Սեպտեմբերի 10-ից մինչև սեպտեմբերի 15-ի ժամը 18.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
15	Տեղամասային ընտրական հանձնաժողովներ կազմավորելու համար հայտերը հանձնաժողովի նախագահին են ներկայացվում. քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30 և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն	Հոդված 44, մաս 2	Սեպտեմբերի 10-ից մինչև սեպտեմբերի 15-ի ժամը 18.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողովի անդամներ
16	Տեղամասային ընտրական հանձնաժողովների առաջին նիստերը կայանում են. հանձնաժողովի կազմավորումից հետո՝ երկօրյա ժամկետում	Հոդված 44, մաս 5	Մինչև սեպտեմբերի 18-ը	Տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ, տեղամասային ընտրական հանձնաժողովի տարիքով ավագ անդամ
17	Ընտրությունների հետ կապված միջոցառումներ կազմակերպելու նպատակով անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճներ և այլ շինություններ օգտագործելու համար դահլիճը տնօրինող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարին դիմում է ներկայացվում. միջոցառման կազմակերպման օրվանից առնվազն երեք օր առաջ	Հոդված 19, մաս 2, ԱՀ ԿԸՀ որոշում N 17-Ն առ 16.01.2020թ.	Միջոցառումից առնվազն 3 օր առաջ	Թեկնածուներ կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ
18	Նախընտրական քարոզչություն իրականացնելու համար համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուն կարող է բացել նախընտրական հիմնադրամ . գրանցվելուց հետո՝ 7 օրվա ընթացքում	Հոդված 26, մաս 1, Հոդված 133, մաս 1	Սեպտեմբերի 10-ից՝ կախված գրանցվելու կոնկրետ օրվանից	Թեկնածուներ
19	Թեկնածուին կամ նրա լիազոր ներկայացուցչին կազմավորված ընտրական տեղամասերի թվի եռապատիկին հավասար թվով վստահված անձանց վկայականներ տրվում է. թեկնածուներին գրանցելուց հետո՝ 5-օրյա ժամկետում	Հոդված 33, մաս 2	Մինչև սեպտեմբերի 21-ը	Գրանցում իրականացրած տարածքային ընտրական հանձնաժողով
20	Նախընտրական քարոզչության ժամանակահատված . թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ	Հոդված 19, մաս 1	Սեպտեմբերի 16-ից մինչև հոկտեմբերի 8-ը, ժամը 24.00-ն	Նախընտրական քարոզչություն իրականացնողներ
21	Օրենսդրությամբ սահմանված դրույթների խախտմամբ փակցված քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը հանվում են. անհապաղ	Հոդված 21, մաս 9	Սեպտեմբերի 16-ից սկսած՝ հայտնաբերման պահից	Համայնքի ղեկավար, անհրաժեշտության դեպքում՝ ոստիկանության աջակցությամբ
22	Նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը՝ ներկայացնում են Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն . նախընտրական քարոզչությունն սկսելուց հետո՝ 10-րդ, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար՝ սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ	Հոդված 28, մաս 1	Սեպտեմբերի 26-ին, հոկտեմբերի 12-ին	Թեկնածուներ

23	Թեկնածուները ինքնաբացարկի մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեն. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն	Հոդված 132, մաս 2	Մինչև սեպտեմբերի 30-ի ժամը 18.00-ն	Թեկնածուներ
24	Քվեարկության օրվանից 10 օր առաջ ընտրողների թվի վերաբերյալ լիազոր մարմնի կողմից տրամադրված տեղեկանքի հիման վրա քվեաթերթիկները տպագրվում են. քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 10, և ոչ ուշ, քան 3 օր առաջ	Հոդված 59, մաս 3, մաս 6	Սեպտեմբերի 30, Սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 7-ը	Լիազոր մարմին, Կենտրոնական ընտրական հանձնաժողով
25	Թեկնածուների վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքների հրապարակումն արգելվում է. քվեարկության օրվան նախորդող 5 օրվա ընթացքում, ներառյալ քվեարկության օրը՝ մինչև ժամը 20.00-ն	Հոդված 22, մաս 2	Սեպտեմբերի 5-ից մինչև հոկտեմբերի 10-ի ժամը 20.00-ն	Սոցհարցումն իրականացնող կազմակերպություններ, պատվիրատուներ
26	Ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում լիազոր մարմին ներկայացվում է. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ	Հոդված 14, մաս 1	Մինչև հոկտեմբերի 6-ը	Յուրաքանչյուր ոք
27	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները տարածքային ընտրական հանձնաժողովին հանձնվում են. քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 5 և ոչ ուշ, քան 3 օր առաջ	Հոդված 60, մաս 3	Հոկտեմբերի 5-ից մինչև հոկտեմբերի 7-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
28	Ընտրական օրենսգրքով սահմանված բավարար հիմքերի առկայության դեպքում ընտրողների ցուցակում անհրաժեշտ փոփոխություններ կամ ուղղումներ կատարվում են և այդ մասին դիմողը գրավոր տեղեկացվում է. դիմումն ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում, սակայն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 4 օր առաջ	Հոդված 14, մաս 1	Մինչև հոկտեմբերի 6-ը	Լիազոր մարմին
29	Քվեարկության օրվա, ընտրական տեղամասի համարի, տեղամասային կենտրոնի հասցեի և ժամանակի մասին ընտրողներին ծանուցագրեր են ուղարկվում . քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ	Հոդված 13, մաս 6	Մինչև հոկտեմբերի 7-ը	Լիազոր մարմին

30	<p>Լիազոր մարմնի կողմից կազմվող ընտրողների ցուցակներն՝ կազմված մատյանի ձևով՝ ըստ ընտրական տեղամասերի, և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները, ինչպես նաև քվեարկության օրը ընտրական տեղամասում ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին տրամադրվում է.</p> <p>քվեարկության օրվանից 2 օր առաջ</p>	Հոդված 12, մաս 3	Հոկտեմբերի 8-ին	Լիազոր մարմին
31	<p>Ընտրողների ցուցակի, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների օրինակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է.</p> <p>քվեարկության օրվանից 2 օր առաջ</p>	Հոդված 13, մաս 4	Հոկտեմբերի 6-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ
32	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովներին քվեաթերթիկները և կնիքները հանձնվում են.</p> <p>քվեարկության նախորդ օրը</p>	Հոդված 59, մաս 7, Հոդված 60, մաս 4	Հոկտեմբերի 9-ին	Տարածքային ընտրական հանձնաժողով
33	<p>Քվեարկության սենյակի կահավորումը պետք է ավարտվի.</p> <p>քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն</p>	Հոդված 57, մաս 3	Հոկտեմբերի 9-ին՝ մինչև ժամը 24.00-ն	Համայնքի ղեկավար, տարածքային ընտրական հանձնաժողով
34	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովին հանձնված բոլոր քվեաթերթիկները ստորագրվում են.</p> <p>քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն</p>	Հոդված 61, մաս 7	Հոկտեմբերի 9-ին՝ մինչև ժամը 24.00-ն	Վիճակահանությամբ որոշված տեղամասային ընտրական հանձնաժողովի 3 անդամներ
35	<p>Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը սկսվում է.</p> <p>քվեարկության օրը՝ ժամը 7.00-ին</p>	Հոդված 64, մաս 1	Հոկտեմբերի 10-ին՝ ժամը 7.00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողով
36	<p>Քվեարկության սկիզբը հայտարարվում և ընտրողների մուտքը քվեարկության սենյակ թույլատրվում է.</p> <p>քվեարկության օրը՝ ժամը 8.00-ին</p>	Հոդված 65, մաս 1	Հոկտեմբերի 10-ին՝ ժամը 8.00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ

37	Քվեարկության ավարտի մասին հայտարարվում և ընտրողների մուտքը քվեարկության սենյակ արգելվում է. քվեարկության օրը՝ ժամը 20.00-ին	Հոդված 69, մաս 1	Հոկտեմբերի 10-ին՝ ժամը 20.00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ
38	Քվեարկության օրը մինչև ժամը 11.00-ն, 14.00-ն, 17.00-ն և 20.00-ն տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը տարածքային ընտրական հանձնաժողով հաղորդվում են. քվեարկության օրը, համապատասխանաբար մինչև ժամը 11.30-ը, 14.30-ը, 17.30-ը և 20.30-ը	Հոդված 8, մաս 9	Հոկտեմբերի 10-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողովներ
39	Քվեարկության օրը մինչև ժամը 11.00-ն, 14.00-ն, 17.00-ն և 20.00-ն տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին նախորդ կետում նշված տվյալները ամփոփվում, հրապարակվում և հաղորդում են կենտրոնական ընտրական հանձնաժողով. նախորդ կետում նշված պարբերականությամբ	Հոդված 8, մաս 9	Հոկտեմբերի 10-ին	Տարածքային ընտրական հանձնաժողովներ
40	Ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին լիազոր մարմնի տեղեկանքի հիման վրա ընտրողների ցուցակում լրացում կատարվում է. քվեարկության օրը՝ լրացուցիչ ցուցակ կազմելու միջոցով	Հոդված 14, մաս 2	Հոկտեմբերի 10-ին՝ մինչև ժամը 20.00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողով
41	Նախընտրական հիմնադրամների հաշիվների հետ կատարվող բոլոր գործառույթները դադարեցվում են. քվեարկության օրվանից	Հոդված 27, մաս 7	Հոկտեմբերի 10-ից	Թեկնածուներ, բանկեր
42	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության կազմումն ավարտվում և արձանագրությունը հրապարակվում է. նիստի վերջում, բայց ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 10 ժամ հետո	Հոդված 72, մաս 5	Մինչև հոկտեմբերի 11-ի ժամը 6.00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ
43	Ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթը, քվեարկության արդյունքների արձանագրության 2 օրինակը, գրանցամատյանը և հանձնաժողովի կնիքը տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են. քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում	Հոդված 72, մաս 9	Մինչև հոկտեմբերի 11-ի ժամը 8.00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար
44	Տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրության տվյալները՝ ըստ ընտրական տեղամասերի աղյուսակավորվում են. պարբերաբար, բայց ոչ ուշ, քան երեք ժամը մեկ	Հոդված 74, մաս 2	Մինչև հոկտեմբերի 11-ի ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով

45	Ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալների աղյուսակավորումն ավարտվում է. քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում	Հոդված 74, մաս 2	Մինչև հոկտեմբերի 11-ի ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
46	Տարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորման օրինակը՝ վավերացված հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով, փակցվում է հանձնաժողովում՝ բոլորի համար տեսանելի տեղում. անհապաղ	Հոդված 74, մաս 3	Մինչև հոկտեմբերի 11-ի ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ
47	Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության նախնական արդյունքներն ամփոփվում և արձանագրությամբ վավերացվում են. քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում	Հոդված 75, մաս 1	Մինչև հոկտեմբերի 11-ի ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
48	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում կարող է ներկայացվել միայն տարածքային ընտրական հանձնաժողով. քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո 2-րդ օրը՝ ժամը 09.00-ից մինչև ժամը 11.00-ն	Հոդված 50, մաս 1	Մինչև հոկտեմբերի 11-ի ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ հոկտեմբերի 12-ի ժամը 09.00-ից մինչև ժամը 11.00-ն	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը ներկա գտնված թեկնածու, վստահված անձ, հատուկ կարծիք հայտնած տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ
49	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. քվեարկության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում	Հոդված 60, մաս 5	Մինչև հոկտեմբերի 14-ը	Տարածքային ընտրական հանձնաժողով
50	Տարածքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմվում է. քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, իսկ բողոք լինելու դեպքում՝ քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը	Հոդված 75, մաս 2, հոդված 136, մաս 1	Մինչև հոկտեմբերի 12-ի ժամը 20.00-ն, բողոք լինելու դեպքում՝ հոկտեմբերի 15-ի ժամը 18.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
51	Վերահաշվարկն իրականացվում է. վերահաշվարկի դիմումների ընդունման վերջնաժամկետի օրը՝ ժամը 14.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը՝ ժամը 14.00-ն	Հոդված 50, մաս 6	Հոկտեմբերի 12-ի ժամը 14.00-ից մինչև հոկտեմբերի 15-ի ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով

52	Ընտրողների ցուցակի, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների օրինակը տեղամասային կենտրոնում մնում են փակցված. <i>մինչև քվեարկությանը հաջորդող 7-րդ օրը</i>	Հոդված 13, մաս 4	Մինչև հոկտեմբերի 17-ը	Տեղամասային ընտրական հանձնաժողով
53	Տարածքային ընտրական հանձնաժողովը համայնքում քվեարկության արդյունքներն ամփոփում և դրա վերաբերյալ որոշում ընդունում է. <i>քվեարկության օրվանից հետո՝ 5 օրվա ընթացքում</i>	Հոդված 75, մաս 8	Մինչև հոկտեմբերի 15-ի, ժամը 18.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
54	Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների վերաբերյալ արձանագրության և որոշման օրինակները Կենտրոնական ընտրական հանձնաժողով և շրջանի վարչակազմի ղեկավարին ներկայացվում են. <i>երկօրյա ժամկետում</i>	Հոդված 75, մաս 9, Հոդված 136, մաս 8	Մինչև հոկտեմբերի 17-ի, ժամը 18.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
55	Ընտրական գրավի գումարը վերադարձվում է. <i>գրավոր դիմումն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում</i>	Հոդված 25, մաս 2	Հոկտեմբերի 15-ից հետո դիմելու դեպքում	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
56	Ընտրություններից հետո նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները փոխանցվում են պետական բյուջե. <i>ընտրության արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ եռամսյա ժամկետը յրանալուց հետո</i>	Հոդված 27, մաս 9	2022թ. հունվարի 15-ից հետո	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

Ծանոթություն–Ընտրական հանձնաժողովների աշխատաժամերն են՝ 9.00-ից մինչև 18.00, հանգստյան օրերը՝ շաբաթ և կիրակի, եթե Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքով և սույն ժամանակացույցով այլ բան նախատեսված չէ: